



49729
277

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Պատմ. գիտ. քեկհամու.)


003 (47.025)

Հ

ՍՏՈՒԳԼՍԻ Է 1981 թ.

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԿԵ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

A $\frac{\pi}{12801}$

Խմբագիր՝ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխ. խմբ. Ն. ԽԱԶԱՏԻՅԱՆ

Սրբադրիչ՝ Կ. ԳԵՏՐՈՍՅԱՆ

Գրավիճակի վաղոր Ն - 1141, Գառիկը 263, Կիրոս՝ 1000

Հանձնված է արտադրության 23 նույնի 1940 թ.

Մտորագրված է տպագրության 5 սպասուսի 1940 թ.

Մանկ. Ինստիտուտի տպարան, Յերեվան, Մարջոի փ. 17, 1940 թ.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Հայկական զրհրի ստեղծման պատմութեան մասին կարևոր աղբյուրներ են հանդիսանում Կորյունի «Մեսրոպի կյանքը», Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան» աշխատութեանները: Փարպեցին գրեթէ բառացի ոգտվում է Կորյունից և ինքն էլ նշում է, թե ովքեր ուղում են ավելի լավ ծանոթանալ հայոց զրհրի հեղինակի գործունեութեան հետ, պետք է կարգան Կորյունի աշխատութեանը: Այսպիսով, գրերի գլուխի հարցի մասին վերջինս որիզինալ հեղինակներ հանդես են գալիս Կորյունը և Խորենացին, վերոնք, ինչպես պետք է յենթադրել, իրարից չեն ողավել: Հետագա շրջանի՝ 9—13-րդ դարերի պատմիչները միայն կրկնում են վերը նշված հեղինակներին:

Սակայն, վերն է հավաստի աղբյուր, Կորյունը թե Խորենացին: Մինչև այժմ յեղած գրեթէ բոլոր ուսումնասիրողներն առաջնութեանը տվիլ են Կորյունին, վերջինս Մեսրոպի հետ գործողի և նրա կենսագրութեանը գրողի: Խորենացին դիտվել է վերջինս լրացուցիչ աղբյուր: Մենք հակառակն ենք կարծում: Հայկական զրհրի ստեղծման պատմութեան վերաբերյալ ավելի հավաստի յեն Խորենացու պատմութեան մեջ յեղած տեղեկութեանները:

Խորենացին, վերջինս Սահակ-Մեսրոպի կրտսեր աշակերտ, իր պատմութեանը գրել է 460—470-ական թվականներին, Սահակ Բագրատունու պատվերով և ծանոթ չի յեղիլ Կորյունի աշխատութեան հետ, վերը պետք է գրված լինի 440—450-ական թվականներին: Կորյունն աշխատել է իր ուսուցչի կյանքն ու գործունեությունը վարքի ձևով առ, վերի հետևանքով և նրա աշխատութեանը վերոշափով կորցրել է յուր պատմական արժեքը, այնինչ Խորենացին աշխատում է պատմական փաստերն ավելի

ՏՀԿԸԽ ԿԵՐԱՊՈՎ շԱՐԱԿՐԵԼ: ՆԿԱՍԻ ՈՆՆԻՆԱԼՈՎ ԱՅՍ ԿԱՆՉԱՄԱՆՔ-
ՆԵՐԸ, մենք մեր սուչն մենագրության մեջ հենվում ենք գլխա-
վորապես Խորենացու տվյալների վրա:

Մեր ներկա աշխատությունը, վոր կարգացվի և Պետա-
մախարանի լիտոգրիումում 1939 թվի գեկտեմբերի 12-ին և
Մանկավարժական Ինստիտուտի մայիսյան յերկրորդ գիտական
սեփալուս, նպատակ ունի նշելու Մեսրոպի մահվան 1500-ամ-
յակը, վորը լրացավ 1940 թ. սկզբներին:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 4-րդ ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻՆ ՅԵՎ 5-րդ ԴԱՐԻ ՍՎՋԲՆԵՐԻՆ

Հայաստանը գտնվելով Արևելքի և Արևմուտքի մեծ պետությունների՝ Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, յերկար ժամանակ պատերազմի թատերաբեմ և հանդիսացել այդ յերկու հզոր պետությունների համար: Մեր թվագրության 63 թվին Հայաստանում ձևակերպված հայ Արշակունի պետությունը չէր կարող իր գոյությունը պահպանել անվերջ կրկնվող արշավանքների պայմաններում, արշավանքներ, վորոնք հարատևեցին և մշտական: Այդ արշավանքներին զուգընթացաբար տեղի ելին ունենում հայ նախարարների, իշխանների ներքին արյունալի կռիվները մեկը մյուսի և հաճախ՝ հայ Արշակունի թագավորները դեմ: Ներքին ու արտաքին կռիվների և պատերազմների հետևանքով հավանական թագավորությունը կործանվեց և 387 թվին, Տիգրանի դաշնագրության բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև:

Հայաստանի արևելյան մասը ¹/₅-ը բաժին ընկավ Պարսկաստանին և կոչվեց Պարսկական կամ Արևելյան Հայաստան: Իսկ ⁴/₅-ը՝ Հայաստանի արևմտյան գավառները կարին կենտրոնով, բաժին ընկավ Հռոմին և կոչվեց Արևմտյան Հայաստան: Հռոմեական կայսրության 395 թվի բաժանումից և Բյուզանդական կայսրության կազմակերպումից հետո, Արևմտյան Հայաստանն անվանվեց նաև Բյուզանդական Հայաստան:

Հայաստանի 387 թվի բաժանումից հետո նրա յերկու մասերումն էլ ժամանակավորապես պահպանվեց հայ Արշակունի թագավորությունը: Արշակ Գ-ն (377—386), վոր նախքան բաժանումն իշխում էր ամբողջ Հայաստանի վրա, բաժանումից դեռ առաջ, 386 թվին, անցավ Արևմտյան Հայաստան և այնտեղ իշխեց: Արևելյան Հայաստանից նա իր հետ տարել էր մեծ քանակ

կուլթյամբ աչքի ընկնող իշխանները: Պարսկահան բաժնի Հայաստանում, բաժանումից դեռ մի տարի ստաջ, նույն 386 թվին, հայ նախարարների պահանջով թագավորում էր Սոսրով Գ-ն (386—391), վորը պարձյալ հայ Արշակունիների տոհմից էր:

Արշակ Գ-ի մահից հետո Հռոմեական կայսրությունն Արևմտյան Հայաստանում այլևս թագավոր չնշանակեց: Դա Հայաստանի այդ մասը վեր ածեց մի նահանգի և կցեց կայսրության՝ կառավարման իրավունքը հանձնելով կայսրության կողմից նշանակված կառավարիչներին¹⁾: Պարսկահան Հայաստանում հայ Արշակունի թագավորության մնացորդներն ավելի յերկար պահեցին իրենց գոյությունը: Սասանյան արքունիքը հայ Արշակունի թագավորության յերկար պահպանմամբ յերկու նպատակ էր հետապնդում. նախ աշխատում էր վստահություն ստեղծել և Արշակ Գ-ի հետ Արևմտյան Հայաստան գնացած հայ նախարարներին վերադարձնել իրենց տեղերը՝ սպառնալով նրանց ռազմական ուժը, և յերկրորդ՝ զբանով նա ուզում էր հայերի համակրանքը շահել և կարել նրանց Արևմտյան ազդեցությունից, թեքել դեպի Պարսկաստան: Տիգրանի արքունիքն առաջին խընդրում հասավ իր նպատակին, իսկ յերկրորդում՝ վոչ:

Արշակի մահից հետո՝ Սոսրով Գ-ը ձգտում էր իր իշխանության տակ տանել Արևմտյան Հայաստանը: Այդ պատճառով նա ավելի յե սկսում սիրաշահել և իր կողմը գրավել այդ մասի հայ նախարարներին: Իր նպատակներն իրագործելու համար Սոսրով Գ-ն Ասպուրակես կաթողիկոսի մահից հետո համաձայնում և կաթողիկոսական աթոռը նորից հանձնելու լուսավորիչի տնօմին, հանձին Սահակ Պարթևի, վորն ազդեցիկ հոգևորական էր յերկրում և կարող էր Սոսրովին մեծ սթանդակություն ցույց մտլ՝ Արևմտյան Հայաստանը հռոմեացիների դերիշխանությունից ազատելու գործում: Արևմտյան Հայաստանի հայ նախարարները Սոսրով Գ-ի մտադրությունը հաշվի առնելով Գազավոն Կամսարականի գլխավորությամբ մի գրություն են ուղարկում նրան և հայտնում հետևյալը.— Գազավոն գորագլխից և

¹⁾ Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», գերք Գ. դ. ԽԶ, ԹԽԿԼԻԱ 1913 թ.:

հունական բաժնի բոլոր հայկական նախարարներին, մեր տե-
րին, Այբարատի կողմի Սոսրով թագավորին վողջույն:

Դու, ինքզ պիտես, տեր, մեր հովատարմությանը դեպի
մեր Արշակ թագավորի հիշատակը, վորը մինք անփոփոխ պա-
հեցինք մինչև նրա մահվան որը: Յեվ այժմ մենք մտածել ենք
ճառայել քեզ նույնպես հովատարմությամբ, յեթև գաշինքով
կհաստատես մեզ այս յերևք բանը. առաջին՝ չհիշել մեր հանցան-
քը... Յերկրորդ, վոր վերադարձնես մեզ մեր բոլոր կալվածնե-
րը, վորոնք պարսկական բաժնում են և գրավել եք արքունիք:
Յերրորդ՝ հնար գտնել մեզ կայսրից ազատելու, վոր չվրդովեն
մեր բնակիչները, վորոնց տիրում ենք այս բաժնում»:

«Աստուծոյն Գաղաւսն և ամենայն նախարարք Հայոց
ժառինն Յունաց, տեսնն մերում Սոսրովու արքայի կողմանն
Այբարատայ խնդար:

Ինքնին, տէր, զիտես զմտերմութիւն մեր առ յիշել թագա-
ւորին մերում Արշակայ, զոր մինչև ցօր վախճանին անշիջելի
պահեցար. և արդ խորհեալ եմք նոյնպէս ճառայել քեզ միա-
մտութեամբ, եթէ հաստատեսցես առ մեզ գաշամբք զերիսս գայ-
տոիկ: Առաջին, չյիշել զյանցանս մեր... Երկրորդ, զի դարցու-
ցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր՝ որ ի մասինդ Պար-
սից, զոր հատէք յարքունիս: Երրորդ, հնարել թափել զմեզ ի
կայսրէ, զի մի վրդովեսցեն զընակութիւնս մեր, որք ունեմք
իշխանութիւն յայսմ բաժնի»¹⁾:

Սոսրով Գ-ն ստանալով նախարարների թուղթը, պատաս-
խանում և նրանց. «Բաջարանց Սոսրով Հայոց թագավորից
Գաղաւսն զորսպետին և մեր բոլոր նախարարներին շատ վող-
ջույն»:

Շատ ուրախ յեղեք, վորովհետև մենք ել վողջ ենք և ուրա-
խացանք ձեր վողջույնի լուրն ստանալով և Ձեր խնդրի համաձայն
ուղարկեցինք Ձեզ այս ուխտն ու սլայմանը: Առաջին, չհիշել ձեր
հանցանքը... Յերկրորդ, վերադարձնել Ձեզ ձեր կալվածները, վոր
արքունիք ենք գրավել բացի նրանից, վոր վոմանց պարգևեցինք,
և թագավորների պարգևները հետ չեն առնվում առանց հան-

¹⁾ Մովսէս Խորենացի, «Պատմության :այոց», դրբ Գ, զլ ԽԸ, Թիֆ-
լիս 1913 թ.:

ցանքի, մանավանդ, վոր այն պարզեանքը մտան մեր հոր թագավորո-
ների թագավոր անբճապուհի դիվանը: Այլ սրա փոխարենն ձեր
կալվածները պահապանութունն արքունի կալվածներէն կլաց-
նենք: Յերբորդ, կազատենք ձեր հունական կառավարչներէն
կամ պատերազմով կայսրի հետ, կամ իտալացիներով»:

«Քաջ արանց խորով Հայոց արքայ, Սարատիկոտի Գազա-
ւունի և ամենայն նախարարաց մերոց ողջոյն»:

Շատ ուրախ լիւրք, դի և մեք ողջ եմք, և ուրախա-
ցաք ընդ լուր ողջոյնի ձերոյ, և սոսքեցաք ըստ խնդրոյ ձե-
րոյ զայս պայման ուխտ: Առաջին, շլիշել զյանցանս ձեր...
Յերկրորդ, զարձուցանել ի ձեզ զժառանգութիւնս ձեր, զոր ու-
նիմք յարքունիս, բայց ի յայնմանէ՝ զոր ումէք պարզեցաք,
և ոչ շրջին պարզեք թագաւորաց առանց փաստու, մանավանդ
զի ի դիւան հորն մերոյ տեառն Եպիսկոպոս արքայից արքային
եմուտ, այլ փոխանակ ընդ այսր և յարքունուտ ընումք և զձե-
րոյն պահապանութիւնս: Երբորդ, թափեմ զձեզ ի գործակալացն
Յունաց, թէպէտ պատերազմու ընդ կայսեր, պէպէտ իտալացի-
թեամբ»¹⁾:

Մովսէս Խորենացու այս տեղեկութիւններն ուշագրով են
այն տեսակետից, վոր պարզարանում են հողային կալվածային
հարաբերութիւնները Հայաստանում 4-րդ դարում: Այդ գրու-
թիւնները, վոր բերում և Խորենացին, հաստատում են, վոր
հողն Արշակունի վերջին թագավորների ժամանակ պատկանում
էր նախարարներին—Ֆեոդալներին. հետեւաբար սխալվում են
այն ուսումնասիրողները, վորոնք կարծում են, թէ հողն այդ
շրջանում պետական և յեղել:

Խորովի այս գրութիւնից հետո, Գազավուն կամսարակա-
նի գլխավորութեամբ Արեւմտյան Հայաստան գնացող նախարար-
ները և այնտեղի իշխանների վորոշ մասն իրենց հետ տարած
արքունի գանձերով վերադառնում են Արևելյան Հայաստան,
վորպէս իրենց գործունեյութեան համար ափէլի ապահով մի
վայրի: Այնուհետև Խորով Գ-ը Սահակ կաթողիկոսի հետ միա-
սին յերկրի իշխաններին համախմբում և հայ Արշակունի թագա-
վորութեան շուրջը՝ ստեղծելով նախապայմաններ վերականգնե-

¹⁾ Մ. Խորենացի, գիրք Գ, գլ. ԽԷ:

լու հայկական միասնական թագավորութունը Հայաստանի յերկու մասերում:

Սուրով Գ-ն իրեն բավականաչափ ուժեղ գլխով, հռոմեական կայսր Արկադիոս խնդրում և իրեն հանձնել Արևմտյան Հայաստանի կառավարման իրավունքը՝ խոստանալով հարկ վճարել և հաշվի առնել հույն կառավարիչներին: Արկադոս շահագրքագլխած լինելով Սուրովին սիրաշահելու գործում, բավաբարում և Սուրովի պահանջը՝ ճանաչելով նրան նաև Արևմտյան Հայաստանի թագավոր: Այսպիսով Սուրովին հաջողվում և Հայաստանի յերկու մասերը միավորել մի պետական ամբողջութան մեջ, մի թագավորի կառավարման իրավասութան ներքո: Իրանով արվում և առաջին լուրջ քայլը՝ Հայաստանը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրութան գերիշխանութունից դուրս բերելու ուղղությամբ:

Սասանյան արքունիքը, վոր իրազեկ ևր հայ մի քանի իշխանների միջոցով Սուրովի ձեռնարկած քայլերին, վոր նա առանց իր գիտության «բարեկամացել» ևր հռոմեական կայսրի հետ և կաթողիկոս ընտրել Սահակ Պարթևին՝ Լուսավորչի տոհմից, մի տոհմ, վորը Սասանյանների դաբավոր թշնամի յեր, սպասնում և Սուրովին: Վերջինս պարսկական թագավոր Շապուհ Գ-ի պատգամաբերին անարգելով հետ և վերադարձնում և մերժում և Շապուհի պահանջը: Դա փաստորեն ապստամբութուն ևր Սասանյան արքունիքի դեմ:

Սուրով Գ-ն անմիջապես պահանջում և կայսրից, վոր նա չեղյալ հայտարարի Պարսկաստանի հետ կնքած խաղաղության դաշինքը և զորքով ուզնի իրեն՝ խոստանալով Արևելյան Հայաստանը դուրս բերել Պարսկաստանի գերիշխանութունից և յինթարկել Հռոմին: Հայ նախարարների մի փոքրաթիվ մասը, դավաճանելով Սուրովին, մեղադրում և նրան Հռոմի հետ բանակցութուններ վարելու մեջ: Շապուհն իր վորդի Արտաշիլին մեծ բանակով Հայաստան և ուղարկում՝ Սուրովին պատժելու համար: Հռոմեական խորամանկ կայսրը հրաժարվում և Սուրովին սպանելու: Վերջինս դրսից ոգնության հույս չունենալով, ստիպված և լինում հնազանդվել Տիգրանի արքունիքին և գնում և Արտաշիլի մոտ:

Արտաշիլը ձերբակալում և Սուրովին և գահազուրկ անում

նրան՝ թագավոր նշանակելով նրա յեղբայր Վրամշապուհին
 (391—414)։ Արտաշէրը վախենալով նոր ապստամբութեան բռն-
 կումից, բանակի մեծ մասը թողնում և Հայաստանում, իսկ ին-
 քը վերագաճնում և Տիգրոն՝ տանելով իր հետ շղթայակապ Խոս-
 րովին և Գաղավոն Կամսարականին։ Պարսիկները վախենում
 էին Գաղավոն Կամսարականից, վորպէս ազգեցիկ իշխանից,
 թէ նա կարող է ապստամբութեան բարձրացնել Պարսկաստանի
 դեմ. այդ պատճառով Տիգրոնի արքունիքը նրան էլ և ձերբա-
 կալում։ Գաղավոնի, ինչպէս և նրա յեղբայր Շավարշի ու Պար-
 գե Ամատունու ունեցվածքը հարքունիս ին գրավում։ Վերջին-
 ներս փորձ են անում իրենց 700 հարսց բաղկացած փոքրաթիվ
 զորքի միջոցով ազատել Խոսրովին և Գաղավոնին, բայց հաջո-
 ղութուն չեն ունենում։ Արտաշէրը զրանից հետո մի քանի իշ-
 խանների ևս շղթայակապ է անել տալիս և տանում Տիգրոն ու
 բանաորիում։ Դրանցից Պարգե Ամատունուն մորթաղերձ են
 անում պարսկական սովորութեան համաձայն։

Վրամշապուհ թագավորը հիմնականում շարունակում է իր
 յեղբոր՝ Խոսրովի քաղաքականութունը՝ նպատակ ունենալով վե-
 րականգնել հայ Արշակունիների թագավորութեան նախկին իրա-
 վունքները։ Բայց փոխում է իր աշխատանքի մեթոդներն ու
 ձևերը։ Նա արտաքուստ հավատարիմ մնալով Տիգրոնի արքու-
 նիքին՝ ներքուստ մեծ զարկ է տալիս հայերի մեջ անկախու-
 թեան ձգտելու գաղափարներին։

Վրամշապուհի յերկարամյա տիրապետութեան շրջանում
 խոշոր թռիչքներով է զարգանում Հայաստանի տնտեսական ու
 կուլտուրական կյանքը, նրա սրով է հորինվում հայկական գե-
 րը, վորի ստեղծումը կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ։

2. ԳՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրերի գյուտը մարդկային հասարակութեան հանճարեղ
 մտածողութեան արդյունքներից մեկն է։ Նա մեծ զարկ ավելց
 քաղաքակրթութեան ու առաջադիմութեան։ Առանց գրերի գյու-
 տի հնարավոր չէ քաղաքակրթութունը։ Ենգելը քաղաքակր-
 թութեան նախապայմաններից մեկը համարում է գրի և գրակա-

նույն թվան ստեղծումը¹⁾։ Գրեկոյ կ, վոր մարդը գրի յի առնում էր գազափառններն ու մտքերը և թողնում հաջորդ սերունդներին։ Սակայն գրերի գյուտը միանգամայն առաջ չի յեկել, — դա յերկար դարերի մտածողության և զարգացման ու փորձերի արդյունքն է յեղիլ։ Գրերի վերջնական և երկարացումը — դա դարավոր պրպառումների վերջին ամենահաջող փորձն էր։

Ներկայումս գործածվող գրերից դեռ շատ առաջ, հազարավոր տարիներին ընթացքում մարդկային հասարակությունը տարբեր յերկրներում, տարբեր միջավայրերում գրելու տարբեր ձևեր և հորինել։ Ուրիշակ, յեգիպտացիները դրում էին հիերոգլիֆներով, բաբելացիները, ասորեստանցիները և իսրայելը՝ սեպագրերով, իսկ զրանցից ևլ առաջ նախասպասմական մարդկությունն ավելի պրիմիտիվ ձևով գրում էր պոյմանական գանազան նշաններով։ Գրերի զարգացումը կատարվել է աստիճանաբար, գնալով պրիմիտիվ ձևից դեպի ավելի կատարելագործված ձևերը՝ հասնելով ներկա գրերի զարգացման աստիճանին։

Գրերի այն ձևերը, վոր ներկայումս գործածում են յեվրոպացիները և Ասիայի բազմաթիվ ժողովուրդները, պարտական են հրեաներին ու վյունիկեցիներին։ Նրանք յեղան մարդկային հասարակության առաջին ծիծեռնակները, վորոնք կազմեցին լիակատար այբուբենը։ Նրանցից այդ այբուբենը տարածվեց դեպի Արևելք և Արևմուտք։ Այբուբենն առաջին անգամ վյունիկեցիներից անցավ Հունաստան, վորտեղից՝ Բաալիա և ծնունդ տվեց հունական կամ լատինական այբուբենին, իսկ վերջինիս հիման վրա կազմվեցին ներկա յեվրոպական ժողովուրդների այբուբենները։ Այնուհետև այբուբենը Հունաստանից անցավ սլավոնական ժողովուրդներին և հայերին, իսկ Հրեաստանից անցավ Արևելք, Հրեական այբուբենից կազմվեցին սեմիտական ժողովուրդների և պարսիկների այբուբենները։ Այսպիսով, հրեա-իյունիկյան նշանագրերի հիման վրա, յերկար դարերի ընթացքում կազմվեցին յերկրագնդի ժողովուրդների մեծ մասի այբուբենների հիմքը։ Իայց յուրաքանչյուր ժողովուրդ վերցնելով այդ առևերն իր հերթին հարմարեցրեց իր լեզվի հնչյունաբա-

1) Ֆ. Ննգևս, «Հնատանիքի մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 9, Յերեան, 1936 թ.։

նական ձեւերին՝ ձեւափոխելով, լրացնելով և կատարելագործելով
այն: Այդ ձեւով վարվեց հայոց գրերի նկատմամբ նաև Մեսրոպ
Մաշտոցը:

3. ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐԸ

Խոսքով Գ-ի վարած քաղաքականութիւնը՝ դուրս բերել
Հայաստանը Հռոմի և Պարսկաստանի դերկշտանութիւններից, ինչ-
պես տեսանք վերևում, մասնովից անհրաժեշտութիւն: Հայ ժողովուր-
դը փաստորեն շարունակեց մնալ յերկու տարբեր պետութիւն-
ների անտեսակոնք-քաղաքական և կուրսուրական ազդեցութիւն-
ների ներքո, մի ազդեցութիւն, վորը կարող էր Հայաստանի
յերկու մասերը կտրել մեկը մյուսից և հեռացնել իրարից կուր-
սուրապէս և տնտեսապէս: Քաղաքական այս անգամահատված
վիճակը հայկերին ձուլելու լուրջ վտանգի առաջ էր կանգնեց-
նում: Ահա այս կտրերը հարցն էր, վոր 4-րդ դարի վերջերին և
5-րդ դարի սկզբներին Վասմշապուհ թագավորի արքայապետու-
թիւնն տարիներում մտածութիւնն առարկա յի դասնում Հայաս-
տանում: Յերկրի առաջագիւծ մարդկանց շրջանում զարգանում
է այն քաղաքաբար, վոր անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի մի-
ջոց, վորը հնարավորութիւնն տա ստեղծելու Հայաստանի յեր-
կու մասերի միջև կուրսուրական և դադափարական միասնու-
թիւնն: Այդպիսի կտրեր միջոցը, պարզ է, վոր կարող էր լինել
միմիայն հայկական գրերի ստեղծումը, վոր իսկապէս մեծ զարկ
կարող էր տալ կուրսուրային, կոտեղծիչ համախումբվածութիւն
հայերի մեջ և հնարավորութիւնն կտար պահպանելու ժողովրդի
ինքնուրույնութիւնը՝ թույլ չտալով ձուլվելու ստարներին հետ:

Հայերեն գրերի ստեղծումը միաժամանակ հնարավորու-
թիւնն կտար վերականգնելու յերկրի անկախութիւնը, ուժեղաց-
նելով Արշակունիների պետութիւնը: Վասմշապուհ թագավորը
հայոց դրի ստեղծման մեջ տեսնում էր վոր միայն հայ ժողո-
վրդի կուրսուրայի զարգացումը, այլ և դրա մեջ տեսնում էր
իր թուլացած պետութիւնն ամրապնդումը:

Հայերեն գրերի ստեղծման յերկրորդ նախադրյալը հանդի-
սանում էր քրիստոնեցութիւնն տարածումը: Հայկական դրի
ստեղծումից ուղիղ հարյուր տարի առաջ, չորրորդ դարի սկզբ

բին, Հայաստանում մուտք եր գործել քրիստոնէյությունը: Մա-
կայն այդ հարշուր տարվա ընթացքում քրիստոնէական գաղա-
փարանխոսությունը լայն ծափալ չէր ստացել Հայաստանում: Աշ-
խատավորական մասսաները զեռ շարունակում էին կապված
մնալ իրենց հին հեթանոսական կրոնին:

Այնպիսի լեզուն անհասկանալի չէր ժողովրդի համար:
Նա կարգույնում եր ասորերին կամ հունարեն լեզուներով, ապա
միայն թարգմանվում հայերեն: Նրանք կոչվում էին բերանա-
ցի-թարգմանիչներ: Քրիստոնէյա քարոզիչները մեծ դժվարու-
թյունների առաջ էին կանգնում: Նրանց գործը պահանջում եր
հայերեն գրի և զբաղանության սակոճումը: Ոտար լեզուներով
սովորելու և քրիստոնէյություն տարածելու դժվարությունների
մասին հեռաքրքիր տեղեկություն և սաղլա հարգ դարի յերկ-
րորդ կեսի պատմագիր Ղաղար Փարպեցին: Նա ասում է.

«...Յերանելի Մեսրոպ Մաշտոցը հող տանելով, միշտ արքա-
մում եր՝ տեսնելով Հայաստանի այն մանուկները մեծ չարչա-
րանքը և արած շատ ծախսերը, վարանք շատ դրամներով, յերկար
ճանապարհնարությամբ և յերկարատե չարչարանքով մաշում
էին իրենց սրերն ասորի գիրության պարոցներում: Վերովհե-
տե յեկեղեցական արարողություններն ու սուրբ գրքի ընթերց-
մունքները վանքերում և հայոց յեկեղեցիներում ասորց գրե-
րով էին կատարվում. այսպիսի մեծ աշխարհի ժողովուրդները
վոչինչ չէին կարողանում հասկանալ և ոգուս ստանալ. պաշ-
տոնյաները նեղություն էին կրում և ժողովուրդն ոգուս չէր
ստանում ասորաց լեզվի անկատարությունից. այս բանի մասին
շատ ժամանակ մտածել եր այն յերանելի Մաշտոցը և նեղաբա-
վել ինքն իրեն, մանավանդ թե հայերեն նշանագրեր կան,
վորոնցով կարելի չէր հայկական և վոչ մարաղամ հնչյուններով
կարդալ ու առհասարակ այր ու կին մարդկանց հագիքը շահել
բոլոր յեկեղեցիներում»:

«...Նրանելոյ ան Մաշտոցի ընկալիալ յամենախնամ մար-
դասերեն Ասածոյ՝ զորացոյց զնա հողով սղորմութեան իւրոյ:
Քանզի հոգացյալ յարամալ արամեր երանելի այրն Մաշտոց տե-
սանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանց Հայաս-
տան աշխարհիս, սրք բազում թոշակօք և հեռագնաց ճանապար-
հօք և բաղմամբ մանակեայ գեղերմամբ մաշէին գաւուրս իւր-
նանց ի դպրոցս ասորի գիրութեան: Քանզի պաշտոն կեկեղեցոյ

և կարգադրուէք գրոց ստորի ուսմամբ վարէին ի վանորայս և եկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այնպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլուութիւնէ լեզուին ասորոյ: Չայս ի բազում ժամանակս զմաս ածեալ հրանելի անն Մաշտոցի, և փղձակցեալ յանձն իւր, մանավանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոցս, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զհոգիս արանց և կանանց անհասարակ յամենայն յեկեղեցիս բազմութեանն»¹⁾:

Ղազար Փարպեցու այս հասովածից պարզ յերևում է, թե վորպիսի ծանր դժվարություններ կային քրիստոնէի յոթնամյա անբաժան համար և թե վորքան դումարներ եր վատնուում: Միաժամանակ այս հասովածից պարզ յերևում է, վոր հայերեն զրեբի մասին անաջին մասձողը լինում է Մեսրոպ Մաշտոցը Վասմշապուհի իշխանութեան ասորիներին:

Վասմշապուհի թագավորութեանը տևում է մտ 25 տարի և անցնում է զրեթե առանց կռիւի, վորովհետև Արևելքի և Արևմուտքի յերկու հողը պետութեանները, այսինքն Մանանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրութեան միջև ստեղծվում է խաղաղութեան մի յերկար շրջան: Անհրաժեշտ է նշել, վոր Վասմշապուհը քաջ թագավոր չէր և վոչ ել հմուտ ռազմագետ: Նա նշանավոր զիվանագետ էր և հայ Արշակունի թագավորների մեջ աչքի բնկնող մի զբաներ անձնավորութեան:

Պարսկաստանի և Հռոմի միջև 387 թվի Տրղբուսի դաշնագրութեանից հետո խաղաղութեանը տևում է բավական յերկար ժամանակ, վորը, պիտի ստել, այդ յերկրները համար շատ հազվագեղ մի յերևույթ էր: Մաղաղութեան սկզբնական շրջանում Իրանում իշխում են այնպիսի թագավորներ, վորոնք վերջ տալով արտաքին պատերազմներին, զբաղվում են յերկրի ներքին գործերով: Այդ թագավորներից հայանի յեն Վասմ (Բահրամ) Դ. (389—399), վորը կոչվում էր նաև Սրմանշահ (Քիրմանշահ)—Կրամանի թագավոր, վորովհետև նախքան թագավոր դառնալը, իւ-

¹⁾ Ղ. Փարպեցի—Պատմութեան հայոց, գլ. Ժ, եջ 28—29, Թիֆլիս 1908 թ.:

ըն թագաժառանգ վարում էր Կիրման գավառի կառավարման պաշտոնը, և Հազկերտ և. (399—420): Սրանք իրենց արաաքին քաղաքականութեան ընապովառում վարում էջին խաղաղ քաղաքականութեան Բյուզանդիայի հետ, իսկ ներքին քաղաքականութեան մեջ անխնա պայքար էջին մղում ռազմատենչ ազնւր վականների և զրազաշտական մոզերի դեմ՝ թուլացնելու համար նրանց ազդեցութեանը պետական գործերում:

Պարսիկները Հազկերտին մեղավոր անուն տվին, իսկ հոռմեացիները մեծահոգի-ազնիվ թագավորի հուշակ, վրոզհետև նա այնքան մեղմ էր վերաբերվում քրիստոնյաներին, վոր նույնիսկ թուլաորեց նրանց իր մայրաքաղաքում 410 թվին ժողով գումարել իրենց հոգևոր պետ ընտրելու համար: Նման մեղմ քաղաքականութեանը նոյաստապար պայմաններ էր ստեղծում Հայաստանում ինչպես շինարարական, նույնպես և կուլտուրական աշխատանքների ծավալման գործում: Իրոք, Վասաշապուհի թագավորութեան շրջանում ծավալվում է կուլտուրական բեղմնավոր մի գործունեություն, վոր հայ ժողովրդի ազգային գոյություն տեսակետով պատմական մեծ նշանակություն ունեցավ: Վասաշապուհի ժամանակ ձեռնարկված կուլտուրական ամենամեծ գործը՝ հայոց գրերի ստեղծումն էր Մեսրոպ Մաշտոցի ձեռքով:

Քրիստոնեությունն ամբողջ 4-րդ դարում, հակառակ Ներսես Մեծի գործադրած ջանքերին, սիրապետող կրոն չէր հանդիսանում Հայաստանում: Հեթանոսական կրոնը շարունակում էր պայքարել քրիստոնեություն դեմ: Մի շարք լեռնային գավառներում քրիստոնեությունը դեռ մուսաք չէր գործել՝ չնայած քրիստոնեյա քարոզիչներին ու իշխանություն կողմից գործադրած մի շարք բռնի միջոցներին: Քրիստոնեությունն տարածման համար կազմակերպվում է մի նոր շարժում, վորի մեջ Վասաշապուհ թագավորին ընկնում էր Թեոփորոս Մեծի դերը: Փորձը ցույց տվեց, վոր բռնի ուժի գործադրման միջոցով Հայաստանում հնարավոր չէր տարածել քրիստոնեություն: Քրիստոնեյա քարոզիչներն ու գործիչներն այժմ աշխատեցին խաղաղ միջոցով տարածել քրիստոնեությունը:

Այդ գործի գլուխ կանգնեցին 5-րդ դարի աչքի ընկնող յերկու վանականներ՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը: Իրանիցմը, իր մազդեյական կրոնի խավարամտութեամբ,

Հայաստանի քրիստոնեությունը
Վասաշապուհի ժամանակ

սկսած 4-րդ դարից ուժեղ թափով ներխուժում եր Հայաստան: Այդ բռնի ուժի առաջ չեք կարող դիմանալ Հայաստանը: Միայն հայկական պետութեան ամրապնդումը, հուլաուրայի զարգացումը և քրիստոնեւթյան տարածումը յերկրում կարող եյին դուրսփոք պատնէշներ հանդիսանալ զրազաշտականութեան ներխուժման առաջ: Սակայն հուլաուրայի զարգացումը կապված եր սեփական գրի և զրականութեան ունենալու խնդրի հետ, վորից գուրկ եյին հայերը Այդ հանճարեղ գործի հեղինակը, ինչպես նշեցինք վերևում, հանդիսացավ Մաշտոցը, իսկ այդ մտքի ստեղծման վայրը հանդիսացավ Գողթան դալաուր:

Վուստրայուսը, այդ Արշակունի վերջին նշանավոր թագաւորն ըմբռնեց հայոց գլխի նշանակութեանը և ընդառաջեց Սահակին ու Մեսրոպին: Այսպիսով իրանիդիւ աղբեցութեան դեմ պայքարելու դիւսալոր միջոցներէց մեկը հանդիսանում եր գրի ու զրականութեանը: Այդ հանդամանքը ևս հայկական գրեթէ ստեղծման նախադրյալներէց մեկը դարձավ:

4. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ՅԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Մեսրոպ Մաշտոցը ծնվել և մտավորապես 353 թվին Մուշի (Տարսն) դավառի Հացեկաց գյուղում՝ Վարդանի ընտանիքում: Վորոշ ուսումնասիրողներ Մեսրոպի ծնունդը գնում են 361 թվին: Բայց առաջին թիմը ավելի հավաստի յի թվում մեզ, քան յերկրորդը, վորովհետև Կորյունի ասելով Մեսրոպը մահացել և խոր ծերութեան մեջ, 80 տարեկանից ավելի հասակում: Նրա հայրը յեղել և աղաս գյուղացի, վոչ ճորտ, և զբաղվել և յերկրագործութեամբ: Մի շարք հետազոտողներ՝ Գրիգոր Սալաթյանը, Մկրտիչ Եմինը, Իսահակ Հարությունյանը, Մ. Որմանյանը և ուրիշները գտնում են, վոր նա աղնվականի վորդի յեք: Բայց այդ մասին մենք վոչ մի տեղեկութեան չենք գտնում մեր մասենագրութեան մեջ: Նրանք յիշում են այն բանից, վոր Մեսրոպը բարձր պաշտաններ և վարել, վորից յեզրակացնում են, վոր միայն աղնվականները կարող եյին պաշտոններ վարել: Դա ճիշտ չի: Նախ 5-րդ դարում դասային կաստայութեանը շատ խորը չեք, յերկրորդ՝ ուսումը մենաշնորհ իրավունք չեք միայն իշխանների համար, նա մատչելի յեր նաև

յածը դասակարգելի, վարձը խավերի համար: Ուստի և Մեսրոպ Մաշտոցը միշտ էլ հնարավորութեան ունենք սովորելու և իր ունակութեանները հանդես բերելու, ինչպես նաև պաշտոններ վարելու գործում: Հենց այն հանգամանքը, վոր Մեսրոպը մինչև իր կյանքի վերջը մնաց վարդապետ և մի վարեկ գավառի կամ նահանգի յայտնկոպտութեան շտապայ, ցուցց և տալիս, վոր նա ազնվական ծագում չի ունեցել, վորովհետև նրա բոլոր ազնվական ծագում ունեցող աշակերտները գրեթե սասանձնեցին այս ու այն գավառի յայտնկոպտութեանը, իսկ հայտնի չե, վոր 4-5-րդ դարերում յայտնկոպտութեանները կազմակերպվում էին նախարարութեաններին կից, վորի յայտնկոպտը պետք է լիներ տվյալ տեղմից:

Մեսրոպ Մաշտոցն սկզբում սովորում և Եերսես կաթողիկոսի բացած դպրոցներից մեկում: Նա հետագայում ձեռք է բերում հունարեն, պարսկերեն և ասորերեն լեզուների մեծ հմտութեան, վորի հետևանքով Արշակունիների պալատում Մոսրով Գ-ի և Վասմշապուհ թագավորների ժամանակ ձեռք է բերում սկզբում գլխավորական պաշտան, հետո զստնում արքունի քարտուղար:

Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեությունի մասին տեղեկություններ քիչ ունենք: Նրա կենսագիր Կորյունն ավելի շուտ վարք և տալիս, քան կենսագրություն: Կորյունի մոտ չեղած հավաստի տեղեկությունները Մեսրոպի սկզբնական գործունեությունի մասին հետևյալն է.

«Այն ժարզը, վորին մենք պատմության սկզբում (տառջին շարքում) նշանակում ենք և վորի մասին շտապում ենք պատմելու, կոչվում եր Մաշտոց, Տարան գավառի Հացեկաց գյուղից, Վարդան անունով յերանելի մարդու վորդի: Մանկություն հասակում կրթվելով հելլենական կրթությունը, վարժված լինելով, գալիս և Արշակունի թագավորների գավառը (Այրարատ) և ծառայությունի և մասնում արքունի գլխատանձ գառնալով թագավորի կողմից արված հրամանների սպասալուր, Հայոց աշխարհի հազարապետ Սուավան կոչված մի մարդու ժամանակ Տեղյակ և հմուտ լինելով աշխարհական կարգերին, իր գլխավորական պետերի կողմից՝ հարմար եր համարվում նաև գլխավոր

2445
A 1280



րական ծառայութեան: Միաժամանակ ուշադիր հետևում եր Աստվածաշունչ գրքի ընթերցանութեան»:

«Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարնական գավառէն, ի Հացեկաց գեղջեէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժյալ՝ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունտական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հաղարպետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինւորական արուեստին իւրոց զօրականացն, և անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց անտուածեղին վրոց»¹⁾:

Մեսրոպն արքունի պաշտօններում մնում է տասը տարի, վերտեղ և ծանոթանում է Սահակ կաթողիկոսի հետ, վոր իր ժամանակի ամենագարբացած և կրթված անձնավորութեանն էր: Սահակի կողմից նա մոտ 394—395 թ. թ. ձեռնադրվում է վարդապետ—հոգևորական, թողնելով արքունի քարտուղարի պաշտոնը, և վորպես քարոզիչ ուղարկվում է Գողթան գավառը (ներկայիս Աղուիս, Նախիջևանի ինքնավար հանրապետութեանում) հեթանոսութեան դեմ քարոզչութեան անկուռ: Մեսրոպին հաջողվում է այդ գավառի իշխան Եաբիթի ղինվորական ուժի միջոցով բռնի կերպով տարածել քրիստոնեւթյունը: Դա նշանակում էր, վոր չնայած Գրիգոր Լուսավորիչի ժամանակից անցել էր մոտ հարյուր տարի, բայց դարձյալ սրի սղնութեան էր դրացվում քրիստոնեւթյունը տարածելու համար: Մեսրոպը Գողթանից անցնում է Սյունիք, բայց վարձյալ հասնելուց և Լուրջ դժվարութեաններէ: Սյունիքում Մեսրոպին աջակցութեան են ցույց տալիս իշխանները, առանձնապէս Վաղինակը:

Մեսրոպի քարոզչութեան ժամանակ հանդիպած դժվարութեաններէ և հաջերին զրեւը ստեղծելու մասին Մ. Խորենացին գրում է. «Յեւ վ յերանելի Մեսրոպը քարոզելու ժամանակ պահաս նեղութեան չէր կրում, վորովհետեւ ինքն էր թե ընթերցո-

¹⁾ Կորյուն—«Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպ վարդապետ մերոյ թարգմանչի», էջ 9, Թիֆլիս 1813 թ.:

զը և թե թարգմանողը և յեթև նրա բացակայութեամբ մի ուրիշն եր կարգում (Աստվածաշունչ), ժողովրդին անհասկանալի յեր մնում, վերսկսեալ թարգմանող չեր լինում. դրա համար եւ նպատակ գրեց հնարել և գտնել հայոց լիզվի նշանապրեր և աշխատելով տանջվում եր զանազան փորձութեաններով»:

«Եւ ի վարդապետել երանելոյն Մեղրոպայ ոչ փոքր կրեր վտանգս, քանզի ինքն եր ընթերցող և թարգմանիչ, և եթէ այլ ոք ընթերցոյր, ուր նա ոչ հանդիպէր, զանխուլ ի ժողովրդոցն լինելը՝ յողագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եզ ի մտի հնարել զտանել նշանապիրս Հայոց լիզուիս. և արկեալ զանձն ի ջանս պէս պէս փորձուք տանջանէր»:

Մեղրոպը 402 թվին վերադառնում է Վաղարշապատ և հարց և բարձրացնում Սահակ կաթողիկոսի առջ Հայոց գրերն ստեղծելու համար: Այդ ժամանակ Վասմշապուհ թագավորը բացակայում եր յերկրից: Նա գնացել եւ Միջագետք պարսկական թագավորի հրամանով իրանական և բյուզանդական դճղերի միջև ծագած վիճերը լուծելու: Վասմշապուհն այնտեղ իմանում և Հաբել քահանայից, վաք ասորի Դանիել յկախկոտութի մաս կան հաւերիս նշանապրեր Վասմշապուհը 403 թվին վերադառնում և Հայաստան, տեսնում և, վաք Մեղրոպն ու Սահակը աշխատում են գրերի ստեղծման ուղղութեամբ: Ինքը նույնպես մասնակցում և այդ հանձարից զօրծի իրականացմանը: Վասմշապուհ թագավորն հայտնում և Սահակին և Մեղրոպին իր լսած դանիելյան գրերի մասին և անմիջապես յերկրի գիտնականներին ու աչքի ընկնող հայեցողականներին հրավիրում և խորհրդի: Վաղարշապատում՝ կաթողիկոսարանում տեղի յեն ունենում մի շարք խորհրդակցութեաներ և վերջում են խնդրել թագավորին արքունի գիտնականներից մեկին սպարելի Միջագետք զանիելյան գրերը բերելու: Վասմշապուհ թագավորը, վաք նույնպես մասնակցած եր հայերեն գրերի ստեղծման գործով, թագավորական հրամանով Միջագետք և ուղարկում արքունի գիտնականներից Վահրիճին. «...յաշխարհէս մերոյ առաքեաց հրեշտակութեամբ (պատգամավոր) զայք մի պատուական և հովատարիմ իւր, Խաղունի ազգաւ Վահրիճ անուն...»¹⁾:

¹⁾ Մովսէս Խորենացի, զԵԵ Գ, զԼ ԾԲ:

Վահրիճը Միջազգայնաբանական դատարանի Հարկի քահանային, նրա հետ միասին գնում է Դանիել յեպիսկոպոսի մոտ և վերցնում է նրանից սառանիշերը, թվով 22 և բերում Հայաստան ու հանձնում Սահակ-Մեսրոպին: Ըստ Կորյունի, Վահրիճի բերած սառերի թվահանր համընկնում է Վառաճապուհ թագավորի 5-րդ տարուն: «Յեւ յայս նրանից ստանալով (Դանիելից նշանագրերը), ուղարկում է Հայոց աշխարհի թագավորին հասցնելով նրան՝ նրա թագավորության 5-րդ տարում»: «...Եւ այս արեալ իմանանէ (Դանիելից նշանագրերը) առաքէր առ արքայն երկրին Հայոց, ի հինգերորդի ամի թագաւորության նորա ի նա հասուցանէ»¹⁾:

Կորյունի այս թվահանրը գրչագրահան սխալ պիտի լինի: Կարծում ենք այդ թվահանրը պետք է լինի վոչ թե Վառաճապուհի թագավորության հինգերորդ տարուն, այլ ստանհինգերորդ տարուն: Հայանի յե, վոր Վառաճապուհը թագավոր է սձվել 390—391 թ. թ.: Նա միջագետք է գնացել 402—403 թ. թ. և այդ թվերին է իմացել դանիելյան գրերի մասին: Պարզ է, վոր Վահրիճի Միջազգայնագր գնալն ու վերագարձը պետք է յեղած լիներ 403 թվից հետո, հավանական է, 404—405 թ.թ., վորը հավասար կլիներ մտավորացիս Վառաճապուհի թագավորության 15-րդ տարուն:

Մեսրոպն ու Սահակը ստանալով դանիելյան այբուբենը, անմիջապես զործունենալով յայն միջ են գնում: Ամենուրեք թագավորության հրամանով և արքունի միջոցներով բացվում են դպրոցներ, կրթում ու դաստիարակում են հայ աշակերտներին, — սառն է Կորյունը²⁾, — մի կողմ թողնելով ասորական լեզվի և դպրության ուսուցումը: Մեսրոպը, նույնիսկ ըստ Կորյունի, ստանում է վարդապետի — ուսուցչի աստիճան՝ դպրոցներում ծառայութուն կատարելու հետևանքով:

Դանիելյալ գրերով յերկու տարի սովորեցնում են աշակերտներին: «...Եւ իբր ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր և նովին նշանագրեր...»³⁾: Սակայն այդ յերկու տարվա

¹⁾ Կորյուն — Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչիս, եջ 12—13, Թիֆլիս, 1913 թ.:

²⁾ Նույն տեղ, եջ 13:

³⁾ Նույն տեղ:

փորձերից հետո Մեարտանու Սահակը համազօրում են, վոր դանի-
ելյան գրեբոյ՝ չի կարելի հայոց լիզու սովորեցնել աշակերտնե-
րին և ստեղծել գրականություն. Մեարտազը խիստ քննադատու-
թյան յենթարկեց հայոց լիզվին չհամապատասխանող այդ նշա-
նագրերը: Դանիելյան գրեբի անդետարության մասին խոսում
և նաև Մովսես Խորենացին:

«...Սբանք սովորելով՝ իրեն հետ մի քանի տարի ողա-
նիք ևս կրթելով, տեղեկացան, ինացան, վոր այդ տառերը բա-
վական չեյին հայկական բառերի հնչյունները ճշտությամբ ար-
տահայտելու»:

«Որոց ուսույլ և թեանկով ընդ նոսա ողայոց զամս սա-
կաւ, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշա-
նագրօք սոպոք հորովի զհեղենայ բառից հայկականաց հագ-
նեղաբար՝ մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ»¹⁾:

Հայերն գրեբը լրացնելու, ուղղելու և կատարելագործելու
համար Միջագետք և ուղարկվում Մեարտան իր աշակերտներին
հետ տնտեսու ասորի Դանիել յեղիսեկոպոսին և այլ ասորի ու
հույն գիտնականներին: Մեարտազը զրանց հետ խորհրդակցելով
պետք և կազմեր հայոց նոր այբուբենը: Մեարտազ Մաշտոցն իր
հետ վերցնում և մի քանի ընդունակ աշակերտներին՝ Հովնան
Յեկեղյացուն, Հովսեփ Պապենցուն և ուրիշներին, ապա 406 թ.
մեկնում և Միջագետք: Առաջին անգամ Միջագետքում հանդի-
պում և Դանիել յեղիսեկոպոսին, բայց նա Մեարտազին վոչ մի
ոճանգակություն չէ կարողանում ցույց տալ, վորովհետև ծա-
նոթ չի հայոց լիզվին և անհասարակ լիզվարանության Ըստ յե-
րևույթին նրա մտ յեղած աշակես կոչված «հայոց տառերը»
պատճառմամբ են ընկել ասորի քարոզիչներին կողմից: Հավանա-
կան և, վոր ասորի քարոզիչները 3—4-րդ դարերում Հայաստա-
նում քրիստոնեություն տարածելու համար փորձ են արել հա-
յոց լիզվին համար ստեղծել գրեբ, բայց այդ փորձն անհաջող և
անցել և այդ կազմած անհաջող տառերն են, վոր ընկել են Դա-
նիել յեղիսեկոպոսի ձեռքը: Դանիելյալ գրեբն անշուշտ կազմե-
ված պետք և լինելին ասորական այբուբենի հիման վրա:

Կարակալա կայսրի ժամանակ (211—217) ապրող ու գոր-

1) Մ. Խորենացի—գեղեց 9, 42 ՄԹ:

ծող Փիլոսոփաառաս պատմաբանի աշխատութեան մեջ տեղեկութեան և պահպանման վրա այդ ժամանակ հայերեն գիր ու գրականութեան և յեզակ: Կարծում ենք, հենց այդ ժամանակ պետք և ստեղծված լինելէր դանիելյան գրերն ստորի քրիստոնյա քարոզիչներին կողմից, վարձեր մուսք էլին դործել Հայաստանի հարավից—Յեղեհայից:

Դանիելյան գրերի մասին ուշագրավ մի հատված և պահպանման վրա Վարդան Բարձրաբերդցու պատմութեան մեջ.

«Մեսրոպը հարկնում և հայերեն տառերը, Հին ժամանակներէից ի վեր Դանիել ստորու մոտ յեղած 22 տառերը չկարողանալով պարզել մեր լեզվի բնագործակութեանը, անցյալում անուշազգի թողնվեցին, բավականապէս հուշ, ստորի և պարսիկ գրերով: Այդ տառերով Մեսրոպը չէր կարող Աստվածաշունչ գրքը թարգմանել հայերեն»¹⁾:

Վարդանի այս տեղեկութեաններէից յերևում և, վոր դանիելյան գրերը վաղուց գոյութեան են ունեցել և պատահմամբ են ընկել նրա մոտ: Հենց այն, վոր նա Մեսրոպին վոչ մի սմանդակութեան ցույց չի կարողացել տալ, ապացոյց և, վոր նա չի ստեղծել հայոց գրերը:

Մեսրոպ Մաշտոցը Դանիելից ոչնություն չստանալով, հուռահատվում և, բայց վորպեսզի մի սգուտ տված լիներ, իր հետ սարած աշակերտներին մտցնում և հունական և ասորական դպրոցները սովորելու, իսկ ինքը պատրաստվում և վերադառնալ Հայաստան: Բայց լսելով, վոր Յեղեհիա քաղաքում գտնուվում և հանձարեղ Պղատոն գիտնականը, վոր վարում էր նույն քաղաքի դիվանի վերակացուի պաշտոնը, ունկնդրելով իր մտերիմների խորհուրդները, վճառում և այցելել նաև Յեղեհիա՝ Պղատոնին:

Մեսրոպը Ամիգ քաղաքի Ակակիտոս յեպիսկոպոսի աջակցութեամբ մեկնում և Յեղեհիա, Պղատոնի մոտ. բայց նա, չնայած իր գործը դրած միջոցներին ու ջանքերին, վարձյալ ոչնություն ցույց չի կարողանում տալ Մեսրոպին, վորովհետև ծանոթ չէր հայոց լեզվին, ուստի խորհուրդ և տալիս նրան, թե անհրաժեշտ

¹⁾ Վարդան Բարձրաբերդցի, «Պատմութեան տեղեկական», էջ 70, Մոսկվա 1861 թ.

և անցնել սամոսացի նշանավոր հուշն Յեպիփանոս գիտնականի մասն Սամսուում կային նաև հարուստ գրագորհան և աչքի ընկնող հուշն և այլ գիտնականներ: Մեծարողը Յեղեսիայից Բարեւրաս Յեղեսիացու առաջնորդութեամբ մեկնում և Սամոս, վորը գտնվում էր Յեղեսիայից գեպի արեմուսք, Կիլիկիայի և Փոքր Հայքի սահմանների մասն, իր հետ վերցնելով Պատմոսից, Բարեւրասից հանձնարարականներ Յեպիփանոսին: Այստեղ խմանալով, վոր Յեպիփանոս գիտնականը մահացել և, Մեծարողը բանակցութեւններով մեջ և մտնում նրա աշակերտ Հոոփանոսի հետ, վոր նուշնուկ հայտնի հուշակ օտներ, բայց նրանից ել անհրաժեշտ ոճանգակութեւն չի կարողանում ստանալ:

«Այն ժամանակ Մեծարողը,—ասում և Խորենացին,—Բարեւրաս յեպիփանոսից ոգնութեւն ստանալով, Փյունիկիայի միջով անցնելով, գնում և Սամոս, վորովհետև Յեպիփանոսը վախճանվելով Թոպկէր մի աշակերտ Հոոփանոս անունով, վորը հելլենական գրչութեան հրաշալիարվեստ ուներ և վորը ստանձնացել էր Սամոսում: Մեծարողը գնալով նրա մասն նրանից եւ սպասւոյցը անկող...»:

«Յայնժամ Մեծարողայ օգնականութիւն ի Բարելոսէ եպիսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամոս գիմէ, քանզի Եպիփանոս վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հոոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեամբ, որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթալ Մեծարողայ, և յայնմ եւ անշահ մնացեալ...»¹⁾

Մեծարողն իր շրջագայութեան ընթացքում անհրաժեշտ ուղևորութեւն չառանալով ինքը Սամոսում ստիպւած և լինում մեծնակ զբաղվել հայոց գրերի ստեղծումով, վորովհետև այնտեղ՝ Սամոսում կային բոլոր միջոցները գրեր ստեղծելու համար: Անշուշտ Մեծարողն իր շրջագայութեան ընթացքում ձեռք և բերում վորոշ հմտութեւն, շփվելով ասորի և հուշն գիտնականների հետ: Նա, չնայած վոր Հոոփանոսից հարկ յեղած չափով ոճանգակութեւն չստացավ, բայց հաճախ խորհրդակցելով նրա հետ, քրտնատանջ աշխատանք էր թափում հայոց գրերի հորինման և

1) Խորենացի, գիրք Գ. զ. ԾԳ:

ձևավորման վրա. «Եւ այնպէս բազում աշխատութեանց համարեցալ վասն իւրոյ ազգին բարեաց...»¹⁾:

Մեսրոպի համառ աշխատանքի հեռանկարով վերջնականապես Սամոս քաղաքում կազմվում են հայերեն գրերը թվով 36 հատ, վերոնք միանգամայն համապատասխանում էյին հայոց գրերի հնչյունարանական ձևերին և արտահայտութայնը: Մեսրոպը հայերեն գրերի սակզման գործում ցուցադրեց մեծ գիտնականի ու լեզվաբանի հմտութուն: Հայոց գրերի սակզման թվականը պետք է լինի 406—407 թ.թ., վերսկզբից Կորյունն ասում է, վեր Մեսրոպն ուրախությամբ «...ևկեալ հասանել ի Հայաստան աշխարհն, ի կազմանս Աբարատյան գովտուին առ սահմանոք նոր քաղաքին (խոսքը վերաբերում է Վաղարշապատին—Հ. Հ.), ի վեցերորդ ամի Վասմշապուհոյ արքային Հայոց մեծացո»²⁾, իսկ այդ կլինի Վասմշապուհի թագավորության 16-րդ տարում, այսինքն 406—407 թ. թ.:

Մեսրոպի կազմած 36 տասերը Հռոփանոս հույն գիտնականը մագաղաթյա թղթի վրա ձևավորում է հանձնում է նրան: Այդ մասին Կորյունը գրում է. «Եւ անդէն ի նմին քաղաքի (խոսքը վերաբերում է Սամոսին—Հ. Հ.) գրիչ ոմն հեղինական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանադրոյն՝ դնրբապոյնս, զկարճն և զերկայնն, գատանձինն զկրկնաւորն միանգամայն յորինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն...» (Կորյուն, էջ 15):

«Թե այնտեղ նույն քաղաքում (խոսքը վերաբերում է Սամոսին—Հ. Հ.) հեղինական գրերին հմուտ մի գրիչ՝ Հռոփանոս անունով, նրա միջոցով՝ նշանագրերի բոլոր ընտրությունը, ավելի նուրբերը, կարճերը և յերկայնները, առանձինը նաև կրկնավորները հորինեց և հարմարեցրեց»:

Ասորի Գանիելի մոտ յեղած գրերը, հալանաբար, առանց ձայնավորի տառեր են յեղել՝ սեմական այբուբենի ձևով դասավորված, միանգամայն անհամապատասխան հայոց լեզվի համար, իսկ Մեսրոպի կազմած այբուբենը, վորով մենք այժմ գրում ենք, հիմնված է հունա-լատինական այբուբենի վրա: Բայց քա-

¹⁾ Կորյուն, էջ 14:

²⁾ Նույն տեղ, էջ 15:

նի վոր հունարեն տառերի քանակը թվով ավելի քիչ էր և չէր կարող բավարարել հայոց լեզվի հնչյունաբանական ձևերին, ուստի նա ստիպված է լինում հունական տառերից վերցնել 21 տառ, հարմարեցնելով նրանց հայոց լեզվին, իսկ 15-ը կազմում է ինքժը, ոչովելով տառերին, պարսկական, զենդերին և այլ լեզուներէ տառերից, հասցնելով այդ մինչև 36 հնչյունի: Մետրոպի հնարած տառերից են՝ Լ, Ժ, Լ, Ս, Մ, Հ, Ձ, Ճ, Յ, Ծ, Չ, Ջ, Ռ. Ց, իսկ հունարենից վերցրել են՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Չ, Կ, Ֆ, Բ, Կ, Դ, Մ, Ն, Ո, Պ, Ս, Տ, Բ, Է, Փ, Բ: Ախալ և այն տեսակեաք, վոր իբր թի Մետրոպը լրացրել և դանիելյան տառերը, մտցնելով նրանց մեջ ձայնավոր գրերը և շունչ ավել այդ մեռած նշանագրերին: Մետրոպյան տառերը վոչ մի անհնարեթյուն չունեն գանիելյան գրերի հետ: Կարծում ենք, վոր Մետրոպն ինքն և հորինել և կազմել հայոց գրերն իրենց ամբողջ կազմով:

Մետրոպը համոռւմ է իր հետապնդած նպատակներին՝ ստեղծելով հայոց լեզվի համար լիակատար այբուբեն հունականի ուղղագրութեամբ: Նրա կազմած տառերը շատ կատարելագործված գրեր էլին և լիակատար կերպով բավարարեցին հայոց լեզվի պահանջներին: Բազմաթիվ ժողովուրդներ են յեղել, յիբր նրանց ստեղծած գրերը վաղուց կորցրել են իրենց նշանակութեանը: Որինակ՝ պարսիկները յերեք տառաձևեր են փոխել պեհլեվերինը փոխարինվեց զենդերնով, վերջինն ևլ արաբերեն տառերով: Այնինչ Մետրոպը ստեղծած գրերով հայ ժողովուրդը 1500 տարուց ավելի յե, վոր գրում և և այդ տառերով ստեղծել և հարուստ գրականութեան:

Մետրոպն իր կրթութեամբ և քաղաքական որիննաացիայով պատկանում էր հունական թեին: Նա պակաս հմուտ չէր նաև հունարեն լեզվին, բայց թի ինչո՞ւ նա իր վորոնումների ժամանակ Հունաստան չգնաց, դա արդյունք է պարսիկների վարած քաղաքականութեանը, վորովհետև նրանք արգելում էին Արևելյան Հայաստանի գործիչներին Հունաստան գնալը: Սակայն Մետրոպը, չնայած չայցիկից Հունաստան, բայց նա այնուամենայնիվ ըմբռնեց հունական տառերի շարադրման ձևի առավելութեանը—ձաթից դեպի աջ գրելու և այբուբեն շարելու առավելութեանը, ուստի և այդ պատճառով նա հայոց այբուբենը չարեց ձաթից աջ ուղղութեամբ՝ հակառակ սեմիտական ստուգա-

կան աջից դեպի ձախ գրության անպետք սխառեմին: Անշուշտ
5-րդ դարի նշանավոր գիտնական Մեսրոպ Մաշտոցի կատարած
քայլը՝ ձախից դեպի աջ տարբերին շարիչն ու զրելը պրոդրեկտիվ
յերևույթ էր: Նա իր այդ գործով ազատեց մեզ սեմիտական
աջից դեպի ձախ գրության ձևից: Այդ գործուժ, կարծում ենք,
Հուստինիանոսի զերը մեծ է յեղել:

Մեզ հայանի յին գրության հետևյալ չորս ձևերը.

1. Ձախից դեպի աջ, վերով գրում են հույները և բոլոր
յեվրոպացիները, ուսաները, հայերը և վրացիները: Գրելու այս
ձևը համարվում է ամենալավագույնը:

2. Աջից դեպի ձախ գրելու ձևը հատուկ է բոլոր սեմիտա-
կան ժողովուրդներին և մահմեդականներին:

3. Ուղղահայաց—վերից ներքև գրում են չինացիները և
ձապոնացիները:

4. Հորեղականը, վոր գրվում է կլոր—կլիփսած և կենտրո-
նից տարածվելով շուրջը:

Այս չորս ձևերից Մեսրոպն ընդունեց առաջինը, վերովհե-
տև նա յեր ամենալավագույն գրության ձևը: Դա նշանակում
է, վոր Մեսրոպն իր ժամանակի մեծ լիզվարան ու մանկավարժ
է յեղել:

* * *

Մեսրոպի բերած հայոց տառերը Հայաստանում ընդուն-
վում են նույնությամբ, առանց փոփոխելու: Հայոց գրերի ստեղ-
ծումից հետո Մեսրոպն ու Սահակն անմիջապես անցնում են
այս գրերի ոգտադործմանը: Գրերի ստեղծումով Հայաստանում
շուտով սկսվում է դպրության ու գրականության գործը: Սա-
հակի և Մեսրոպի շուրջը կարճ ժամանակվա ընթացքում հա-
վաքվում են բազմաթիվ աշակերտներ: Վաղարշապատում բաց-
վում է առաջին դպրոցը, վորտեղ Մեսրոպն աշակերտներին սո-
վորեցնում է հայերեն գրագիտության, վորն արագ կերպով տա-
րածվում է յերկրի մի քանի առաջնակարգ գավառներում,
առանձնապես ազնվականների տղաների մեջ:

Հայոց գրերի ստեղծումից հետո, լուսավորության գործը
բաժանվում է Սահակի, Մեսրոպի ու նրանց աշակերտների մի-
ջև: Սահակն իրեն է վերապահում գործի ընդհանուր ղեկավա-

բությունը և թարգմանությունը, իսկ Մեսրոպին հանձնարարում
և քարոզչություն կատարելու և դպրոցներ բաց անելու գործը:
Վերջինս վերցնելով իր առաջին աշակերտներին անցնում և Գող-
թան գավառը, իսկ այնտեղից էլ գնում Սյունյաց յերկիրը, ուր
նրան մեծ աջակցություն են ցույց տալիս Վաղինաի և Վառաի
իշխանները: Այս փաստը ցույց և տալիս, վար յեթե Հայաստա-
նի լեռնային գավառները, վարեղ քրիստոնեկությունն սվելի
գանդաղ և ուշ էր մուտք գործել, Մեսրոպին ցույց են տալիս
մեծ աջակցություն, զա նշանակում եր, վոր Հայաստանի գրեթե
բոլոր նախարարների համար ձեռնառու չէր հայերեն գրերի ստեղ-
ծումը: Այդ բոլոր գավառներում նա անխախտ բաց և անում
դպրոցներ, հավաքում աշակերտներ, թողնելով այդ վայրերում
վորպես ուսուցիչ իր հետ տարած աշակերտներից մեկ կամ յեր-
կուսին: Այդպիսով նա հերթականությամբ շրջում և գրեթե Հա-
յաստանի բոլոր գավառները և վերջն էլ անցնում և Արևմտա-
յան Հայաստան, վորտեղ նրան արգելում են գործել, ուստի նա
Մեկտոնենյի վրայով ուղևորվում և գեպի Բյուզանդիոն (Կ. Պո-
լիս) և ներկայանում Թեոփոս Բ. կայսրին ու հունական Ատիկոս
պատրիարքին, վորոնցից Արևմտյան Հայաստանում ազատ քա-
րոզչու, դպրոցներ բաց անելու իրավունք ստանալով, վերադառ-
նում և և անարգել շարունակում իր գործը: Մեսրոպի այս շրջա-
գայությունը տևում և վեց տարի, հավանական և 417—423 թ.թ.:

Սասանյան արքունիքը վոչ մի արգելք չհարուցեց հայոց
գրերի ստեղծման գործին, ընդհակառակը, նա ոժանդակում էր
հայոց գրերի հորինմանը, կարծելով, վոր յեթե հայերն ունենան
իրենց գիրն ու գրականությունը, կկարլին քրիստոնեյա աշխար-
հից, մտնավանդ հույներից և ընդմիջու կենթարկվեն պարսիկ-
ների ազդեցության: Սասանյան արքունիքը չարաչար սխալվեց
իր հաշիվների մեջ: Հայոց գրերի ստեղծումով հայերի կապն
ավելի յե ուժեղանում հույների-բյուզանդացիների հետ, վորով-
հետև հայերն սկսեցին թարգմանություն կատարել հունարենից:
Տասնյակներով և նույնիսկ հարյուրներով հայ աշակերտներ
գարձալ շարունակեցին գնալ հունական դարգացած քաղաքներ՝
սովորելու և գիտություն ու կրթութուն ձեռք բերելու համար:
Իսկ հայկական գրականության ստեղծումը և հայկական կուլ-
տուրայի զարգացումը զորավոր պատենշ էր հանդիսանում իրա-

նիզմի ներխուժման դեմ, վորն սկսած 4-րդ դարից ուժեղ չափով փորձում եր թափանցել Հայաստան:

Սահակ-Մեսրոպյան աշխատանքները տեղում և ավելի քան 25 տարի, վորի ընթացքում մայրենի լեզվով կրթվել ու դաստիարակվել եր մի ամբողջ սերունդ: Հայերեն գրերի գյուտից դեռ շատ առաջ հայոց դպրոցներում աշակերտները սովորում էյին հունարեն կամ ստորերեն: Հայաստանի Արևմտյան բաժնում արևադարձային լեզուն հանդիսանում եր հունարենը, իսկ արևմելյան և հարավային նահանգներում ստորերենը և պարսկերենը: Առաջինը գործ եր ավելում յեկեղեցիներում, յերկրորդը սրբատներում և պաշտոնական գրագրություններ ժամանակ, իսկ Մեսրոպյան գրերից հետո, Հայաստանի յերկու մասերումն էլ տիրում և հայերեն լեզուն, նույնիսկ Սահակ կաթողիկոսն իրավունք և ձեռք բերում սրաշանտավորելու նաև Արևմտյան Հայաստանում:

Բյուզանդիան թույլ տալով Մեսրոպին ու Սահակին ազատ գործելու Արևմտյան Հայաստանում, նպատակ ունեւր իրեն յինթաքիլել նաև Արևելյան Հայաստանը, իսկ վերջինները Վրամշապուն թագավորի հետ միասին աշխատելով զորի տալ կույտուրային և տարածել քրիստոնեական կրոնը Հայաստանի յերկու մասերում, ձգտում էյին միասնություն ստեղծել Հայաստանի յերկու հատվածներ ձիջև, նախագրյալներ ստեղծելով հայկական միասնական պետությունը վերականգնելուն:

Սահակն ու Մեսրոպը չեն բավարարվում միմյանց դպրոցական գործի կազմակերպումով, նրանք կարիք են զգում գրականության ստեղծմանը, առաջին հերթին Աստվածաշնչի թարգմանությանը: Հայերեն գրերի գյուտից դեռ շատ առաջ Հայաստանի իշխող դասերի մեջ մշակվել և բավական ճոխ և հարուստ հայերեն գրաբար լեզու, վորը հավանաբար հայերեն բարբառներից մեկի կամ յերկուսի, ավելի շուտ, Արարատի և Մուշի բարբառների հիման վրա յեր կազմվել, իսկ այդ գրաբար լեզուն, վոր հանդիսացավ գրական լեզու, 5-րդ դարում մեծ տարբերություն չունեւր բարբառներից, մանավանդ Տարսնից, վորտեղի ծնունդ էյին թե Մեսրոպը և թե Սահակը: Ահա այդ լեզվով և թարգմանվում առաջին անգամ սուրբ գիրքը:

Մեսրոպը դեռ միջադեպում յեղած ժամանակ Հոսիանոսի

հետ ձեռնարկել և Աստվածաշնչի կտորների թարգմանութեանը: Նա Հայաստան վերադառնալուց հետո շարունակեց ի իր թարգմանութեանը: Հայերեն առաջին գրքով առաջին թարգմանութեանը և հայերեն առաջին շրջավոր խոսքը, ըստ Կորյունի, հանդիսացել և Սոդոմոնի առակների առաջին զլխի առաջին տողը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ իմանալ զբանս հանճարոյ...»¹⁾: Բայց սուրբ գրքի հիմնական թարգմանիչը հանդիսացավ Սահակ կաթողիկոսը:

Նրանք շուտով զգում են, վոր այդպիսի մեծ գործի համար ավելի պատրաստականութեան ևր պետք, քան այն, վոր իրենք ունեյին: Ուստի իրենց ընդունակ աշակերտներին մոտավորապես 426—427 թվերին ուղարկում են Սուրբ և Հունաստան՝ լիզուներ սովորելու և գիտութեաններ ուսումնասիրելու համար: Այդ աշակերտներից հայտնի չեն դառնում պատմութեան մեջ Յեղնիկ Կողբացին, Հովհան Պապնացին, Կորյուն, Գևորգ Վանանդեցին, Հովսեփ Վայցձորեցին և ուրիշները: Նրանք յոթ տարի սովորում են գիտութեաններ և հաջող ավարտում: Մոտավորապես 434 թվին այդ աշակերտները վերադառնում են Հայաստան իրենց հետ բերելով հունարեն Աստվածաշնչի յոթանասնից թարգմանութեան ընտիր որինակը: Սահակ Պարթևն աշակերտների ոգնութեամբ թարգմանում և սրբազրում և ամբողջ գիրքը և վերջնականապես համեմատում Մեսրոպի՝ ասորերենից թարգմանութեան հետ ու խմբագրում, վորով ստացվում և Աստվածաշնչի յերկու թարգմանութեանը՝ Մեսրոպի՝ ասորերենից և Սահակի և աշակերտների՝ հունարենից կատարած թարգմանութեանները:

Սահակի ու Մեսրոպը և նրանց ավագ աշակերտները պատմութեան մեջ հայտնի չեն թարգմանիչ անունով, այդ անվան հիմքն անշուշտ նրանց թարգմանչական գործերն են յեղև: Թարգմանիչները միմիայն Աստվածաշնչի թարգմանութեամբ չբավարարվեցին, նրանք թարգմանեցին նաև ուրիշ շատ գրքեր, ստեղծվեց թարգմանիչների մի ամբողջ սերունդ, վորոնք բացի թարգմանութեանից, ձեռնարկեցին նաև ինքնուրույն յերկերի հորինմանը: Կորյունը գրեց իր ուսուցիչ Մեսրոպի կյանքն ու

¹⁾ Կորյուն, էջ 15:

մահը», Յեզնիկ Կողբացին գրեց «Եղծ աղանդոց» փիլիսոփայական աշխատութիւնը: Նշանավոր են Ագաթանգեղոսի և Բյուզանդի «Պատմութիւն հայոց» գրքերը և այլն: Ավաղ աշակերտներին հաջորդեցին կրտսեր աշակերտները և ամբողջ 5-րդ դարում Մեսրոպի ու Սահակի աշակերտներէջ առաջ յեկաւ պատմաբանների մի ամբողջ շարան, վորոնք մեկը մյուսից առաւել պատմական յերկեր ավեցին: Այդ աշակերտների մեջ Մովսէս Խորենացին, վորպէս 5-րդ դարի հեղինակ, իր արժանի տեղը գրավեց:

5. ՄԵՍՐՈՊԻ ՄԱՀ

Մեսրոպ Մաշտոցը, հայ գրբի հորինողը, տաւերի ստեղծումից հետո, 35 յերկար տարի իր կյանքը նվիրեց հայկական դպրոցների բացման, աշակերտների կրթութեան և գրականութեան ստեղծման գործին: Նա իր մահկանացուն կնքում և Սասանյան Պարսից թագավոր Հազկերտ յերկրորդի ժամանակ (438—457): Թե վոր թվին և մահացել Մեսրոպը, մինչև այժմ վեճի առարկա յե դարձել և անհրաժեշտ պարզաբանումներ չկան այդ ուղղութեամբ: Ուսումնասիրողներից մեծ մասը հակասական կարծիքներ են հայտնում Մեսրոպի մահվան թվականի մասին: Մեսրոպի կենսագիր Կորյունի ասելով իր ուսուցիչը մահացել և Սահակ կաթողիկոսի մահվանից վեց ամիս հետո, հայոց մեհեկան ամսի 13-ին, վոր հավասար և վեհարվարի 17-ին, Վարըշապատ քաղաքում¹⁾:

Կորյունի այս թիվը գրեթե նույնութեամբ կրկնում են թե Մովսէս Խորենացին և թե Դաղար Փարպեցին: Անհրաժեշտ և այժմ պարզել Սահակի մահվան թվականը, այն ժամանակ կարելի յե վորոշել Մեսրոպի մահվան ճիշտ թիվը: Սահակ կաթողիկոսն ըստ Կորյունի մահացել և պարսիկ Վուսթ թագավորի վորդի Հազկերտ թագավորի առաջին տարում²⁾, իսկ ըստ Խորենացու Հազկերտի թագավորութեան յերկրորդ տարվա սկզբին:

«Այնտեղ հասավ նրա մահը, 51 տարի յեպիսկոպոսապետութիւնն անելուց հետո, սկսած հայոց Խոսրով վերջին թագավորի

¹⁾ Կորյուն. էջ 39—40:

²⁾ Նույն տեղ, էջ 37:

յերը որդ տարուց մինչև պարսիկներէ Հազկերտ Թագավորի
յերկը որդ տարվա սկիզբը...»:

«Ուր ենաս վախճան, կեցեալ եպիսկոպոսոսպիտութեամբ
ամս հիսուն և մի. սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Ստորովայ Հա-
յոց արքայի, մինչն ցակիւրն ամի երկրորդի Հազկերտի եղելոյ
Պարսից Թագավորի յերս ամսոյն նավասարդի»¹⁾: Մ. Սորենացու
ասածները հաստատում և նաև Ղազար Փարպեցին²⁾:

Ըստ գերմանացի գիտնական Նիլդեքեյլի պարսից Հազ-
կերտ Թագավորն իշխել և Ք38 թվի ութսուտի 4-ից մինչև 457
թվի հուլիսի 30-ը: Յեթի Սահակի մահը տեղի յի ունեցել հա-
յոց նավասարդ ամսի 30-ին, վորը հավասար և սեպտեմբերի
7-ին, հալմանարար նրա մահը տեղի յի ունեցել Հազկերտի Թա-
գավորութեան յերկրորդ տարվա սկզբին, այն և՛ 439 թ. սեպ-
տեմբեր ամսին, ուստի Սահակի մահը տեղի յի ունեցել 439 թ.
սեպտեմբերի 7-ին, հայոց նավասարդ ամսի 30-ին: Սրա վրա
ավելացնելով վից ամիս, Մեսրոպի մահը տեղի և տեղի ունե-
ցած լինի 440 թ. փետրվարի 17-ին, հայոց մեհեկան ամսի
13-ին: Այսպիսով 1940 թ. փետրվարի 17-ին արդին լրացել և
Մեսրոպի մահվան 1500-ամյակը:

* * *


1500 տարի յի անցել այն սրից, յերբ կնքեց իր մահկա-
նացուն հայ գրերի հեղինակ Մեսրոպը. բայց նրա թողած գրե-
րով 15 դարից ավելի յի, վոր հայ ժողովուրդը գրում ու ստեղ-
ծագործում և: Այդ 1500 տարվա ընթացքում Մեսրոպյան գրե-
րով ստեղծվել և մեծ քանակութեամբ գրականութեան: Մենք,
Ստալինյան մեծ գարաշրջանում ապրողներս, վոր գտնվում ենք
յերջանիկ պայմաններում, Մեսրոպ Մաշտոցի, այդ 5-րդ դա-
րում համեա գիտնականի մահվան 1500-ամյակը հավերժաց-
նելու համար, նրա ստեղծած գրերով գրված 1500 տարվա ըն-
թացքում բաղմահարուստ հայ գրականութեանից սգալելով, պետք
և ել ավելի հարստացնենք և զարգացնենք բովանդակութեամբ
ինտերնացիոնալ և ձևով ազգային սոցիալիստական մեր հարուստ
կուլտուրան ու գրականութեանը:

1) Մ. Սորենացի, գիրք Գ, գլ. 45:

2) Ղ. Փարպեցի, գլ. ԺԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ցերկու խոսք	3
1. Հայաստանի քաղաքական դրուժյունը 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի սկզբներին	5
2. Գրի նշանակությունը	10
3. Հայոց գրերի ստեղծման նախադրյալները	12
4. Մեսրոպ Մաշտոցը և հայկական գրերի ստեղծումը	16
5. Մեսրոպի մահը	30



20238



ՀԻՅԵ — Ո. 104.

A $\frac{11}{1280}$

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

(Кандидат истор. наук)

ИСТОРИЯ СОЗДАНИЯ АРМЯНСКИХ БУКВ

Изд. Педагогич. института, Ереван, 1940 г.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0013442

ЦЕНА

12801